ԳԱՅՏԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀՆՏՔԵՐ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռ. Ս. ԽՆԿԻՆՅԱՆ

Հնագույն ժամանակներից ի վեր մարդը քարի հետ միասին լայնորեն օգտագործել է նաև փայար՝ երկրագործության, տրանսպորտի և ընդհանրապես նյութական արտադրության բոլոր ճյուղերում ու կենցաղում։ Սակայն օրգանական նյութ լինելով, փայտը վատ է պահպանվում և, հասկանալի է, սկզբումների ժամանակ փայտյա գործիքներ, այլևայլ իրեր շատ սակավ են գտնվում։ Այդուհանդերձ, հայտնաբերված մի քանի փայտյա նմուշները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմելու ուսումնասիրվող ժամանակաշրջանի փայտագործության զարգացման մակարդակի և փայտի գործածության բնագավառների մասին։ Մեզ հասած նյութերը ցույց են տալիս, որ ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի տնտեսության մեջ փայտից պատրաստել են աշխատանքի բազմաթիվ գործիքներ, ինչպես և գործիքների ու զենքերի բաղկացուցիչ մասեր։

Դեռևս անցյալ դարի վերջերին ֆրանսիացի հայտնի հնագետ Ժ. դե Մորգանը Ախթալայի դամբարանադաշտում բացեց վաղ երկաթի դարաշրջանին պատկանող մի քարարկղ, որի մեջ հայտնաբերվեցին փայտի խոշոր բեկորներ։ Դրանք իրենց վրա կրում էին հղկված բազալտե փոքրիկ քարաբեկորներ, որոնք տեղադրված էին փայտի ստորին հարթության վրա պատրաստված քառակուսի փորվածքներում (նկ. 1)։ Ֆրանսիացի հնագետը նման քարաբեկորների է հանդիպել նաև Շեյթան-դադի ու Մուսիերիի (Լալվար լեռան մոտ) բազմաթիվ դամբարաններում[1]։ Լալվարի դամբարանադաշտերի հիշատակված նյութերը, անկասկած, կամերի մնացորդներ էին, որոնք օգտագործվում էին մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին հայկական լեռնաշխարհում և նրան կից շրջաններում։ Այդ են ապացուցում Սամթավրոյից, Բեշթաշենից, Հարավային Օսեթիայից և այլ վայրերից հայտնաբերված հղկված քարաբեկորները, որոնք ցույց են տալիս երկրագործության բուռն վերելքը ողջ Անդրկովկասում[2]։

Դժվար կլիներ ճշտությամբ վերականգնել Լալվարից հայտնաբերված կամերի ձևը և չափերը, եթե Խանլարի № 2 դամբարանաթմբից չհայտնաբերվեին լավ պահպանված կամը, ինչպես նաև մ. թ. ա. II հազարամյակի վերջին պատկանող այլ նյութերը[3]։ Կամ (չափերը՝ 120×40×4,5 սմ) բաղկացած էր երկու իրար միացած տախտակներից, առջևի մասը ուներ որոշակի թեքություն և երկկողմանի կորություն, որը աշխատանքի ընթացքում գործիքը դարձնում է շարժունակ։ Կամը առջևի մասում, վերին հարթության վրա ուներ որոշ

---

[1] J. de Morgan, Mission scientifique au Caucase, tome I, Paris, *1889*, էջ *138*, նկ. *143*։

[2] Б. Б. Пиотровский, Основные этапы древнейшего земледелия в Армении. *(տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես». 1961, № 3—4, էջ 114—115)*։

[3] Я. И. Гуммель, Курган № 2 близ Ханлара, КСИИМК, № 24, 1949, էջ *56—57*, նկ. *13, 7—8*։

ուռուցիկություն՝ պարան կապելու համար։ Ստորին հարթության վրա կային շախմատաձև դասավորություն ունեցող խուլ, ուղղանկյուն անցքեր (չափերը՝ 1,6×1,6×1,4 սմ), որոնց մեջ ամրացված էին քարաբեկորները (նկ. 2)։ Կամը պատրաստվել է կաղնու ծառաբնից։

Հայ ազգագրության մեջ պահպանվել է կամ պատրաստելու հետևյալ հնագույն և միակ ձևը։ Ծառաբունը հատելուց և չորացնելուց հետո հյուսնը սկսում է տախտակ պատրաստել՝ ճեղքելով ծառաբունը մի քանի մասերի (հավանական է, որ ուշ բրոնզի ժամանակաշրջանում այդ նպատակի համար օգտագործվել են սակրը, փայտյա սեպերը, գրերն ու հարթ տապարիկները). Տախտակի պատրաստումից հետո նրա ներքևի հարթության վրա փորվում են խուլ անցքեր և տեղադրվում են քարաբեկորներ, որից հետո տախտակի վրա ջուր է լցվում. այն ուռչում է, սեղմելով քարաբեկորները[4]։

Երկրագործական մյուս գործիքի՝ արորի գործածության մասին են վկայում մեզ հասած սխեմատիկ պատկերները։ Բրոնզեդարյան արորի կառուցվածքի մասին պատկերացում է տալիս Լեռնային Ղարաբաղի Խոջալիի դամբարանադաշտի № 20 դամբարանաթմբից հայտնաբերված խեցու բեկորը, որի վրա պատկերված է արորը և այն քաշող կենդանին (նկ. 3)[5]։ Նման պարզագույն արորների ժայռապատկերներ են հայտնաբերել նաև Ջաֆար-գագեն Կոբըստանի Ցազիլի-դաղ բլրում[6] և Սիսիանի, Եղեգնաձորի, Աղիզբեկովի շրջաններում[7]։ Ըստ Բ. Բ. Պիոտրովսկու, հավանական է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում «գործածության մեջ է եղել նաև պարզունակ գութանը, որը օգտագործվում էր արդեն անդրկովկասյան ցեղերի հարավային հարևանների մոտ»[8]։ Գութանի խոփ հայտնաբերվել է մ. թ. ա. VIII—VII դդ. պատկանող նյութերի հետ՝ Վանի պեղումներից։

Հենվելով հնագիտական նյութերի և ազգագրական տվյալների վրա, արորի պատրաստման եղանակը կարելի է պատկերել հետևյալ կերպ. օգտագործվել է կաղնու փայտը և կիրառվել են աշխատանքի նույն գործողությունները, ինչ կամի համար։ Ոչ հեռավոր անցյալում, հայկական և ընդհանրապես Անդրկովկասի գյուղական վայրերում արորը պատրաստում էին հետևյալ եղանակով։ Մոտ 12—14 սմ հաստություն և 2,5 սմ երկարություն ունեցող հաստ ճյուղի մի ծայրը տաշում և մտցնում էին ռադամի վրա պատրաստված հատուկ անցքի մեջ, որից ոչ հեռու ամրացվում էր մաճը։ Ռադամը և հաստ ճյուղը իրար էին ամրացվում թրի միջոցով (նկ. 4)[9]։ Արորի առկայությունը և երկրագործական աշխատանքների բնույթը ենթադրել են տալիս, որ հերկած հողի կոշտերը մանրացնելու, ինչպես և ցանքսն ավելի արդյունավետ դարձնելու համար պետք է, որ օգտագործվեին ցաքանն ու փոցխը, փայտյա թիերը, եղանները և այլ գործիքներ։

---

[4] Այսօրինակ տեղեկությունները վերցրել ենք տոհմական հյուսն՝ Մ. Գրիգորյանից։

[5] ОАК, 1897. С. П6, т. VII, 1900, էջ 48, նկ. 138։

[6] Т. А. Бунятов, Земледелие и скотоводство в Азербайджане в эпоху бронзы, Баку, 1957, էջ 41, նկ. 6։

[7] Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 280—281)։

[8] Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 114։

[9] Վ. Պետրոսյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 73—75։

Երկրագործության, անասնապահության զարգացումը, ինչպես և ռազմական ընդհարումները նպաստեցին տրանսպորտի այն տեսակների զարգացմանը, որոնք գոյություն ունեին Առաջավոր Ասիայում և Հայաստանում դեռևս մ. թ. ա. IV հազարամյակից սկսած։ Իրոք, սայլերը, ինչպես ցույց են տալիս Սյունիքի, Դեղամա լեռների[10] սայլերի նորահայտ ժայռապատկերները և Մոխրաբլրից, Շրեշբլրից, Հառիճի բնակավայրից և այլուր հայտնաբերված երկանիվ սայլերի կավակերտ պատկերները, հանդես գալով Հայաստանում մ. թ. ա. IV—III հազարամյակներում և անցնելով զարգացման երկարատև ուղի, ուշ բրոնզի դարաշրջանում վերջնականապես ձևավորվում են և լայն տարածում ստանում ամբողջ Հայաստանում[11]։ Այդ են վկայում ինչպես կավե մոդելները ու ժայռապատկերները, այնպես էլ բրոնզե գոտիների ու կավամանների վրա փորագրված երկանիվ և քառանիվ սայլապատկերները։ Այս տեսակետից ուշադրավ է Դիլիջանից հայտնաբերված կենդանազարդ փոքրիկ կճուճը, որի վրա առկա են ութը այծերի, երկանիվ սայլի և մարդկային երկու պատկերներ[12]։

Նման սայլեր են պատկերված և Սևանի ավազանից, Սանահինից[13], Ստեփանավանից[14], Ախթալայից[15] հայտնաբերված բրոնզե գոտիների վրա։ Ամբողջական սայլեր և մոդելներ են հայտնաբերվել նաև Վրաստանի ու Ադրբեջանի՝ Թրիալեթի[16], Դմանիսի, Մինգեչաուրի[17] և այլ վայրերից։ Դրանք պատկանում են միջին և ուշ բրոնզի դարաշրջաններին։ Թվարկված օրինակները իրենց զուգահեռներն ունեն Միջագետքում, Առաջավոր Ասիայում։ Այսպես, օրինակ, Թեփե-Հավրայից, Քիշից[18], Ուրից[19] հայտնաբերված քառանիվ ծածկասայլերի մոդելները և սայլերը ամենևին չեն տարբերվում Հայաստանում հայտնաբերվածներից։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ փայտամշակությունը Հայաստանում գտնվել է զարգացման այն մակարդակի վրա, ինչ և հարավում։

Մասնագիտական գրականության մեջ լուսաբանված են սայլերի նկարագրությունը, չափագրությունը, դասակարգումը, կառուցման առանձնահատկությունները[20]։

---

10 Ուսումնասիրված են 1969 թ., նյութերը չեն հրատարակված։

11 Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, նշվ. հոդ., էջ 280—281։ Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 174, նկ. 9։

12 ՀՍՍՀ ՊՊԹ, դույլ № 1919/1։

13 Հ. Հ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը Հայաստանում (տե՛ս Աշխ. ՀՊՊԹ-ի, հ. 1, 1948, նկ. 1, 3)։

14 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 160, նկ. 65։

15 J. de Morgan, La préhistoire Orientale, tome III, Paris, 1927, էջ 297, նկ. 297։

16 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалете, Тб., 1941, էջ 79։

17 Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, էջ 128, նկ. 98։

18 Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956.

19 А. И. Тюменев, Государственное хозяйство древнего Шумера, М.—Л., 1956.

20 Տե՛ս С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ер., 1966, էջ 130—113; А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (Տե՛ս С. А., 1957, № 2, էջ 151); А. А. Мартиросян, նշված աշխ., էջ 96—101; С. А. Есаян, Об одной неправильной реконструкции (Տե՛ս աշխատ. ՀՊՊԹ-ի, հ. 5, Երևան, 1959, էջ 95—103)։

Ներքին-Գետաշենի[21] ու Լճաշենի[22] դամբարանադաշտերից հայտնաբերվածները իրենցից ներկայացնում են «բարձրակող, ցածրակող, կամարակապ ծածկով, երկանիվ ու քառանիվ սայլեր, մանկական սայլակներ, ճանապարհորդական կառքեր ու ճեպընթաց մարտակառքեր»[23]։ Պեղված բոլոր սայլերը բաղկացած են երեք հիմնական մասերից՝ թափք, սռնի (անիվներով) և լծափայտ (առեղների հետ)։

Թափք.— ուշ բրոնզեդարյան թափքի պարզագույն օրինակներ են հանդիսանում Լճաշենի №№ 2, 6, 10 դամբարանթմբերում հայտնաբերվածները։ Ջանգվածեղ անիվներ ունեցող սայլերին պատկանող այդ թափքերը կազմված են երկու քառանկյուն փայտաձողերից, որոնք միաժամանակ առեղներ են։ Դրանք առաջամասում միանում են իրենց ծայրերին բացված հորիզոնական անցքերում ագուցված փայտյա սեպիկների օգնությամբ։ Առեղների ետնամասում հորիզոնական դիրքով պատրաստված են կլոր և քառանկյուն փորվածքներ, որոնց ամրացվում են սռնին և թափքի հատակը կազմող փայտերը (նկ. 5)։ Այդպիսի կառուցվածքի առավելությունը պատրաստման դյուրության մեջ է, իսկ թերությունը եղրակողերի բացակայությունն է, որով և փոքրանում է թափքի բեռնատարողությունը։

Զարգացման հաջորդ փուլում թափքն արդեն ստանում է եղրակողեր, որով մեծանում է նրա բեռնատարողությունը։ Այդպիսի թափքեր հայտնաբերվել են Լճաշենի № № 1—3, 9—11 դամբարանթմբերից, ինչպես և Ներքին Գետաշենի «միջխանական» դամբարանթմբից։ Սրանք նույնպես կազմված են երկու քառանկյուն փայտաձողերից, որոնց առաջամասում և ետնամասում արված հատուկ փորվածքներում լայնակի կերպով ամրացվել են երկու տախտակ։ Ստացված ուղղանկյուն շրջանակի փայտաձողերի եզրերին և վերին մասում բացված հորիզոնական և ուղղահայաց անցքերում ամրացվել են փայտե ձողերը և կողաճաղերը, ձևավորելով թափքի հատակը։ Կողաճաղերի վրա վերևից ագուցվել են կողափայտերը։ Նման կառուցվածքը թափքը դարձնում է ամուր և տարողունակ։ Այդպիսի կառուցվածք ունեն Լճաշենի № 11 դամբարանթմբից հայտնաբերվածը, ինչպես և Ներքին Գետաշենից պեղված սայլի թափքը (նկ. 6)։ Հիշատակված մնացյալ դամբարանթմբերից հայտնաբերված սայլերի թափքերը ունեն կամարաձև ծածկ՝ կազմված մեկ տասնյակից ավելի ճկուն, կամարաձև ծռված ձողերից, որոնցից յուրաքանչյուրի վրա բացված միջանցիկ ուղղանկյուն անցքերով անց են կացվել բարակ փայտաձողեր՝ թերևս թաղիքից կամ խսիրից պատրաստված ծածկը ամրացնելու համար (նկ. 7)։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենից հայտնաբերված ճանապարհորդական թեթև կառքերի մնացորդներն ու մարտակառքերի թափքերի բրոնզե երեք պատկերները (նկ. 9, 12)։ Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոքր թափքը, որի վրա կանգնած են երկու զինվորներ, երեք կողմից ծածկված լինելով մարտիկին պաշտպանող բարձր եզրակողե-

21 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 194—196։

22 А. О. Мнацаканян, Дрезние повозки из кургана бронзового веска на побережье озера Севан (С. А., 1960, № 2).

23 Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», պրակ. 2-րդ, Երևան, 1969, էջ 27—28։

բով, բաց էր ետևի կողմից, իսկ առջևի մասում ուներ բարձր կանգուն, որը ռազմիկներին հնարավորություն էր տալիս ընթացքի ժամանակ պահպանել հավասարակշռություն։ Ի տարբերություն դրանց, փայտյա ճանապարհորդական կառքերի թափքը բաց էր միայն առջևի կողմից։ Թափքի նման կառուցվածքը բխում է գործնական անհրաժեշտությունից։ Իրոք, եթե առաջին դեպքում մարտիկը հնարավորություն ունի շարժման ժամանակ արագ բարձրանալ և իջնել մարտակառքից, ապա ճանապարհորդական կառքի թափքը ապահովում է արագ ընթացքը և թույլ է տալիս ճանապարհորդին նստած ղեկավարել ձիերը։

Ընդհանրացնելով թափքերի ուսումնասիրության արդյունքները հանգում ենք հետևյալին. 1) թափքը և առեղը քաշանի հետագա զարգացման արգասիք են, 2) այնուհետև թափքին տրվում է սայլի նշանակությանը համապատասխան կառուցվածք, 3) մեզ հասած սայլերից եգրակողերով բաց թափքերը հարմար են բեռներ տեղափոխելու, թերևս նաև մարդկանց համար, 4) թափքերի պատրաստման սկզբունքը գրեթե նույնն է, օգտագործման նպատակները՝ տարբեր։

Առեղ.— ինչպես թափքերը, այնպես էլ առեղները բազմատեսակ են և պայմանավորված տվյալ սայլի օգտագործման նպատակից։ Սկզբնական շրջանում առեղ-թափքը կազմված է եղել երկու փայտաձողերից, որոնք առաջամասում միացվում էին միմյանց հորիզոնական գիրք ունեցող անցքերում ագուցված փայտե ցցի օգնությամբ։ Դրանք ունեին փոքր բեռնատարողություն և կարուկ շրջադարձ կատարել չէին կարող։ Մարտակառքերի և «թեթև» կառքերի առեղները կատարելագործված են, որոնք մի դեպքում քառակող ուղիղ ձող են, մյուս դեպքում՝ առեղը իր ետնամասում ունի ընդգծված կորություն։ Առեղները լծին են միացվում կաշեփոկի և փայտյա ցցի օգնությամբ։ Հայտնաբերված լծափայտերը քառակող են, որոնց ծայրերին կան կենդանու պարանոցին դնելու համար արված հաստուկ կորություններ։

Փայտամշակության բարձր վարպետության արգասիք են սայլերի անիվները։ Դրանք երկու տեսակ են՝ զանգվածեղ և ճաղավոր։ Առաջին տեսակի անիվները պատրաստված են երեք կտոր կոպիտ տաշված տախտակներից, որոնց հպվող երեսները իրար են միացվել զլանաձողերով։ Դրանք ամրացվել են նախապես փորված անցքերում։ Անիվը կազմող կենտրոնական տախտակի երկու կողմերից արված են անվաթմբուկի նման հավելվածներ, որոնց մեջ բացված անցքերում տեղադրված է սռնին։ Ազգագրական տվյալների համաձայն՝ անիվը պատրաստվում էր հետևյալ կերպ. անվատախտակները ընտրվում էին խոնավ փայտից, որոնք դրի օգնությամբ փորվում էին։ Բացված անցքերում ամրացվող փայտե գլանաձողերը պատրաստվում էին չոր փայտից։ Այդ բոլորից հետո անիվը թրծվում էր տաք մոխրի մեջ, որով խոնավ փայտը աստիճանաբար չորանում էր և իր մեջ սեղմում ագուցված գլանաձողը։ Չոր գլանաձողը այդ ընթացքում պահպանելով իր ծավալը չի սեղմվում, չի բարակում ու չի շարժվում ագուցված բնի մեջ[24]։

Ավելի բարդ կառուցվածք ունեն ճաղավոր անիվները։ Դրանք կազմված են քսանութ մշակված ճաղերից, որոնք մի ծայրով ամրացված են անվաթմբուկին, մյուսով՝ անիվի փայտյա գոդին։ Այսպես են պատրաստված ինչպես

24 Լ. Ն. Պետրոսյան, էջեր Հայաստանի փոխադրամիջոցների զարգացման պատմությունից («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 210)։

ճանապարհորդական կառքերի, այնպես էլ մարտակառքերի անիվները։ Ճաղավոր անիվ պատրաստելու համար, ինչպես ցույց են տալիս ազգագրական տվյալները, օգտագործվում էր համապատասխան հաստություն և երկարություն ունեցող կոճղ, որի ծայրերը բարակեցվում էին։ Կոճղի կենտրոնական մասում ճաղերի համար փորվում էին անհրաժեշտ քանակությամբ փոսիկներ։ Այնուհետև կոճղի մեջ դրի և կրակի օգնությամբ բաց էր արվում անցք։ Անվագողի համար ընտրվում էր համապատասխան երկարություն և հաստություն ունեցող փայտ, որի վրա բաց էին արվում անցքեր, իսկ ծայրերը միացնելու համար փորվում էին ելուստներ և խորություններ։ Այնուհետև կրակի օգնությամբ աստիճանաբար կլորացվում էր փայտը։ Ստացված օղակի ծայրերին փորված ելուստները և փոսիկները մտցվում էին իրար մեջ և ամրացվում փայտե սեպիկների օգնությամբ։ Այս եղանակով էին կորացված նաև սայլերի կամարաձև ծածկերը։ Որոշ սայլերի թափքերը (Լճաշենի № № 9, 10 դամբարանաթմբերից հայտնաբերվածներինը) իրենց ներսամասում ծածկված են բավական բարակ տախտակներով, որոնք եզրամասերում սղոցվել են և ամրացվել կողաճաղերին։ Տախտակները իրար են միացված փայտե սեպիկներով և ունեն հարուստ զարդանախշեր՝ պատրաստված արտակարգ նրբությամբ։ Դրանք անվերջանալի պարույրներ են, զիգզագներ, խաչաձև և ցանցկեն գծեր, եռանկյունիներ և երկրաչափական այլ պատկերներ։ Նման նուրբ փորագրությամբ ուռուցիկ զարդանախշեր ունեն նաև Ներքին Գետաշենից հայտնաբերված սայլի կողափայտերը (նկ. 13)։ Նախշերը ունեն միանման տեսք, արված են հավասարաչափ ու շարքով, մի բան, որ անհնար է առանց նախնական գծագրության և չափագրության։ Սայլերը հսկայական փորձի և հմտության արգասիք են։ Դրանց փայտի բնակազմական մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ նախնադարյան հյուսնը ոչ միայն մշակել էր սայլերի պատրաստման որոշակի կանոններ, այլև շատ լավ գիտեր յուրաքանչյուր ծառատեսակի տեխնիկական ու դեկորատիվ հատկությունները։ Սայլի անիվը պատրաստվել է թեղու, սոնին, թեները, առեղը՝ կաղնու, առեղի ականջները մի դեպքում թեղու, մյուսում՝ կաղնու փայտից, իսկ ծածկը՝ կարմիր ծառից։ Նշված ծառատեսակները ունեն տարբեր հատկություններ։ Այսպես՝ կարմիր ծառի բնափայտը ունի հաճելի գույն և հեշտությամբ է հղկվում, թեղին և կաղնին աչքի են ընկնում ամրությամբ[25]։

Փայտամշակման աշխատանքների ուսումնասիրման գործում առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել կենցաղային գործածության իրերին։ Մեզ են հասել ափսեներ, մատուցարաններ, գդալներ[26], ցանցկեն քառոտանիներ, որոնց ուսումնասիրությունը կրկին խոսում է փայտագործության ասպարեզում ձեռք բերված բարձր վարպետության մասին։

Փայտամշակության աշխատանքների հետ են կապված Լճաշենից, Ջրաբերից, Ջրառատից, Ցամաքաբերդից հայտնաբերված ցանցկեն քառոտանիները։ Դրանք ուղղանկյուն շրջանակներ են՝ կազմված տաշված կամ անմշակ կլոր փայտերից։ Կողափայտերի վրա կան երկարավուն անցքեր, որոնցից անց են կացրել կաշեփոկերը, ստեղծելով ցանցանման հարմարանք։ Շրջանակների

---

25 В. Паланджян, Деревянные повозки из раскопок у сел. Лчашен Севанского ранона Арм. ССР (տե՛ս «Աշխատ. ՀՍՍՌ-ի», Երևան, 1959, հ. 3, էջ 266—269)։

26 Հայտնաբերվել են Լճաշենում, նյութերը չեն հրատարակված։


0 20 40 60 80 100
26.1
26.2
26.3
26.4
26.5
26.6
26.7
26.8
26.9
26.10
26.11
26.12
26.13

անկյուններում ամրացվել են պատդարակի չորս ոտքերը, որոնց մի մասը պատրաստված է խնամքով և ձևավորված է, իսկ մյուսները՝ ոչ։

Փայտը լայնորեն օգտագործվել է նաև բնակարանաշինության (հազարաշեն կտուրներ, առաստաղը պահող կենտրոնական հիմնասյուներ, դռներ և այլն), գերեզմանի ծածկի, նավակների, զանազան զենքեր ու գործիքներ պատրաստելու համար (նետ, աղեղ, նիզակ, կապարճ, վահան, դաշույնի դաստակ, սակրերի կոթեր, ջուլհակի դազգահներ և այլն), որոնց մեծ մասը մեզ չի հասել։

Ելնելով հայտնաբերված նյութերի պատրաստման եղանակներից, ինչպես նաև հայտնաբերման հանգամանքներից, կարելի է ենթադրել, որ փայտամշակությունը եթե դեռ չէր անջատվել երկրագործությունից ու անասնապահությունից, ապա այդուհանդերձ կար արդեն առանձին արհեստավորը, որը աշխատում էր եթե ոչ շուկայի համար, ապա պատվերով։

Փայտագործական աշխատանքները բաժանվել են երկու խմբի. 1) մասնագիտացված կամ բարդ և 2) ոչ մասնագիտացված կամ պարզ։ Սայլերը, մարտակառքերը և այլն պահանջում էին մասնագիտացված աշխատանք, հետևաբար և մասնագիտացված գործիքներ (սակրեր, զանազան տեսակի դրեր, սղոց և այլն)։ Մինչդեռ նիզակներ, սակրեր, դուրզերի կոթեր և այլն պատրաստելու համար պարտադիր չէր տվյալ գործի մասնագետ լինել, քանի որ դրանք հատուկ հմտություն և փորձ չէին պահանջում։ Ուշագրավ է և այն, որ առաջին խմբի իրեր հայտնաբերվել են հարուստ դամբարանթմբերից, իսկ զանազան զենքերի բաղկացուցիչ մասերը հանդիպում են ամենուր։ Ուստի և կարելի է ենթադրել, որ իր աշխատանքի մեջ լավ հմտացած հյուսնը աշխատում էր պատվերով, բայց ոչ շուկայի համար։ Հետևաբար փայտագործության հետ կապված իրերի կարիքը հիմնականում բավարարում էր փայտագործ վարպետը, որի արտադրանքի մի մասը (սայլ և այլն) շատ թանկ արժեր, իսկ մյուս մասը այնքան անհրաժեշտ չէր (փայտյա զանազան ամանեղեն և այլն)։ Իրոք, սայլերը, որ զարգացած անասնապահության պայմաններում այնքան անհրաժեշտ էին, հայտնաբերվել են միայն հարուստ դամբարանթմբերից (թանկարժեք են) և կատարված են պատվերով (պատրաստված են արտակարգ խնամքով)։

Այսպիսով ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում փայտամշակությունը Հայաստանի բնիկների տնտեսական կյանքում էական տեղ է գրավել։ Փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի նախնադարյան փայտագործ վարպետները տարբեր իրեր պատրաստելու ժամանակ խիստ սահմանազատում են մտցրել տարբեր փայտատեսակների միջև։ Նրանք միաժամանակ տիրապետել են փայտի մշակման տարբեր եղանակներին (հատել, տաշել, հարթեցնել, սղոցել, փորագրել և այլն)։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կային առանձին արհեստավորներ, որոնք աշխատում էին պատվերով, հավանական է նաև՝ շուկայի համար։ Տվյալ արհեստաճյուղի զարգացման բարձր մակարդակը հիմք է տալիս ենթադրելու, որ փայտամշակությունը ժառանգական բնույթ է կրել։

---

27 Հ. Հ. Մնացականյան, Խոսում են հուշարձանները, Երևան, 1968, էջ 134։